ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/97

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.04.2021թ. թիվ 26/26-1/5696-2021 գրությամբ Զավեն Խուկեյան Գևորգի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի 13.04.2021թ. թիվ 01/01-649 գրության հիման վրա 15.04.2021թ. թիվ 26/26-1/5696-2021 գրությամբ նախաձեռնել է Զավեն Խուկեյան Գևորգի Ա/Ձ-ին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Զավեն Խուկեյան Գևորգի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Զավեն Խուկեյան Գևորգի Ա/Ձ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Մասնակիցը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/97 ընթացակարգի շրջանակներում 21.04.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 13.04.2021թ. թիվ 01/01-649 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից 2021 թվականի մարտի 12-ին ՀՀ «Գնումների մասին օրենքի» 22-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ կազմակերպվել է «ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-21/ԳԱ-1» ծածկագրով գնման ընթացակարգ, որի արդյունքում 1-ին, 2-րդ, 7-րդ և 15-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել Զավեն Խուկեյան Գևորգի Ա/Ձ-ն: 2021 թվականի մարտի 29-ին գնման ընթացակարգի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել է ընտրված մասնակցին և ուղարկել է պայմանագրի նախագիծը: Սակայն Զավեն Խուկեյան Գևորգի Ա/Ձ-ն պայմանագրի նախագիծը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումները՝ հրաժարվել է պայմանագրի կնքումից»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/97 ընթացակարգի շրջանակներում 21.04.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/97 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/97 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվել է «ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-21/ԳԱ-1» ծածկագրով գնանշման հարցման

ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Զավեն Խուկեյան Գևորգի Ա/Ձ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.03.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 7-րդ և 15-րդ չափաբաժինների մասով Զավեն Խուկեյան Գևորգի Ա/Ձ-ին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

3. Զավեն Խուկեյան Գևորգի Ա/Ձ-ին 29.03.2021թ. ծանուցվել է պայմանագրի նախագիծը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.04.2021թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ 10 աշխատանքային օրվա ընթացքում Մասնակիցը չի ներկայացրել հաստատված պայմանագիրը, պայմանագրի ու որակավորման ապահովումները, ինչով պայմանավորված՝ հանձնաժողովը որոշել է Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ներկայացնել լիազորված մարմին:

5. <u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 15.04.2021թ. թիվ 26/26-1/5696-2021 գրությունը, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի 13.04.2021թ. թիվ 01/01-649 գրությունը և կից փաստաթղթերը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ և 5-րդ մասերի համաձայն՝

1. ***Մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին*** ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

2. Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ: Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

3. Մրցույթի և էլեկտրոնային աճուրդի դեպքում անգործության ժամկետը առնվազն 10 օրացուցային օր է: ***Գնման այլ ընթացակարգերի համար <u>անգործության ժամկետն առնվազն հինգ օրացուցային օր է:</u>***

5. Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առ ոչինչ է:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում:

Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպես, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվել է «ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-21/ԳԱ-1» ծածկագրով գնանշման հարցման

ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Զավեն Խուկեյան Գևորգի Ա/Ձ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.03.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 7-րդ և 15-րդ չափաբաժինների մասով Զավեն Խուկեյան Գևորգի Ա/Ձ-ին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

Զավեն Խուկեյան Գևորգի Ա/Ձ-ին ***29.03.2021թ.*** ծանուցվել է պայմանագրի նախագիծը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ***12.04.2021թ.*** նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ 10 աշխատանքային օրվա ընթացքում Մասնակիցը չի ներկայացրել հաստատված պայմանագիրը, պայմանագրի ու որակավորման ապահովումները, ինչով պայմանավորված՝ ***հանձնաժողովը որոշել է Մասնակցի փվյալները՝ համապատասխան հիմքերով, ներկայացնել լիազոր մարմին:***

Ուսումնասիրելով գնահատող հանձնաժողովի գործողությունների հաջորդականությունը՝ ուղղված պայմանագրի կնքմանը՝ արձանագրում եմ հետևյալը.

Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ ***անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:***

Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված ***անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝*** ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

Գործով առկա նյութերը համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ՝ արձանագրում եմ, որ Պատվիրատուն ***24.03.2021թ.*** www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու՝ Տեղեկագրում) ***հրապարակել է*** «ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-21/ԳԱ-1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում ***պայմանագիր կնքելու մասին հայտարարություն***, ըստ որի՝ Օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ ***անգործության ժամկետ է սահմանվել սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հանջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, այն է՝***

29.03.2021 թվականը ներառյալ՝ հաշվի առնելով, որ պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը Տեղեկագրում հրապարակվել է 24.03.2021 թվականին: Մինչդեռ արձանագրում եմ, որ Զավեն Խուկեյան Գևորգի Ա/Ձ-ին ծանուցվել է պայմանագրի նախագիծը 29.03.2021 թվականին, այն է՝ անգործության ժամանակահատվածում:

Նման պայմաններում արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից խախտվել են վկայակոչված հոդվածների պահանջները, այն է՝ մինչև պայմանագիրը կնքելու իրավասության առաջանալը ծանուցել է Մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, որով պայմանավորված՝ սխալ է հոսել նաև Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ Մասնակցի կողմից պայմանագիրը ստորագրելու 10 աշխատանքային օր ժամկետը:

Միաժամանակ հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը ***պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում***, ***չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:*** Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն:***

Մինչդեռ սույն գործի փաստերի հիման վրա արձանագրում եմ, որ ***Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները, քանի որ 12.04.2021թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ, 10 աշխատանքային օրը լրացած չլինելու պայմաններում, Մասնակցին զրկել է պայմանագիր կնքելու իրավունքից:***

Ուստի նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել Զավեն Խուկեյան Գևորգի Ա/Ձ-ի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված՝ որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելու փաստը, հետևաբար գտնում եմ , որ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.04.2021թ. թիվ 26/26-1/5696-2021 գրությամբ Զավեն Խուկեյան Գևորգի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**